

De Evenaar, Centrum voor Transculturele Psychiatrie

Թերապիաներ և զբաղմունքներ

Էֆենար

Ոչ կրոնական երկրներից եկած տարբեր ազգերի

Հոգեբուժության Հյուսիսային – Հոլանդիա Կենտրոն

Թերապիաներ և զբաղմունքներ

Էֆենարը, ոչ կրոնական երկրներից եկած տարբեր ազգերի հոգեբուժական օգնության կենտրոնը, հոգեբուժական օգնություն է առաջարկում հոգեկան պրոբլեմներ ունեցող այլազգիներին, որոնք նույնպես տառապում են ուրիշ կուլտուրայի հետ հարմարվելու պրոբլեմներով կամ էլ տրավմայով:

Այս տեղեկատվության մեջ դուք ավելի շատ ինֆորմացիա կկարդաք տարբեր թերապիաների և զբաղմունքների մասին, որոնք կարող են Էֆենարում առաջարկված բուժման մի մասը կազմել:

Զբաղմունքների թերապիա

Այս թերապիայի ժամանակ աշխատանք է տարվում տարբեր մատերիալներով, ինչպես օրինակ՝ տեքստիլ, փայտ և թուղթ: Զբաղմունքների թերապիան կարող է այլ արդյունքների թվում նաև կենտրոնանալու ունակությունը լավացնել և ինքնավստահությունը ավելացնել: Հնարավոր է նաև ուշադրություն դարձնել այլ զբաղմունքների վրա, (կամավոր)աշխատանք կամ դպրոց:

Ստեղծագործական թերապիա

Սա փորձված թերապիա է, որն ուղղված է ոչ թե խոսելու այլ մի բան անելուն: Գոյություն ունեն ստեղծագործական թերապիայի երկու ձևեր: Դրանք են.

- Պատկերավոր թերապիա

Այս թերապիայի ժամանակ տարբեր մատերիալներ, ինչպես ներկը, մատիտը, թուղթը և պլաստիլինը հնարավորություն են տալիս հիվանդին նկարել կամ պատկերել այն, ինչ իր համար ամենակարևորն է: Այդ ձևով կարող են տխրության կամ ուրախության զգացմունքները տեսանելի և շոշափելի դարձնել:

- Դրամատիկ թերապիա

Թերապիայի այս ձևի դեպքում գործածվում է այն ամենը, ինչը որ կապ ունի բեմադրության և թատրոնի հետ: օրինակ՝ դերերի կատարում, իմպրովիզացիաներ, ինչպես նաև տեքստեր գրել, զգեստեր և դիմակներ պատրաստել և դեմքները ներկել:

Կուրս "Մարդ և Ազգային Սովորույթ"

Սա խմբակային զրույցի ձևով հավաք է, որի ժամանակ մի գլխավոր թեմա է դրվում քննարկման, որը կապ ունի արվեստի հետ: Այս կուրսը կօգնի սովորել հոլանդական սովորույթներն ավելի լավ հասկանալ: Դրա մյուս կարևոր նպատակն այն է, որ մտածել և քննարկել սեփական ազգային սովորույթների դրական կողմերը:

Դեղորայք

Էֆենարում շատ ժամանակ առաջարկվում է նաև դեղորայքային բուժում: հոգեբույժն է պատասխանատու դեղորայք դուրս գրելու հարցում: Դեղորայքը կարող էք ստանալ Ձեր դեղատանը:

Մարմին և Ստրես մոդուլ

Այս մոդուլն առաջարկվում է ցուցումներին համապատասխան, այն հիվանդներին, որոնք, որպես երկարատև ստրեսի հետևանք ծանր վիճակում են և մարմնական շատ գանգատներ ունեն: "Մարմին և Ստրես" մոդուլում աշխատանք է տարվում ֆիզիկական վիճակի լավացման ուղղությամբ և սովորել լարվածությունից առաջացած գանգատները ավելի լավ գնահատել և ճիշտ վարվել դրանց հետ:

Հոլանդերեն լեզուն

Ցուցումներ ունենալու դեպքում հնարավոր է հոլանդերեն լեզվի դասեր ստանալ Դրենտեի GGZ-ի ուսուցչուհու մոտ: Օրինակ այն դեպքում, եթե հիվանդն իր հոլանդերեն լեզվի ոչ բավարար իմացության պատճառով չի կարողանում բավարար չափով մասնակցել թերապիաներին:

Հոգեմոտորիկ թերապիա (PMT)

Այս թերապիան վերաներում է մարմնի շարժմանն ու զգալուն: PMT-ն տեղի է ունենում սպորտ դահլիճում: Եթե երկար ժամանակ քիչ մարմնական շարժում է կատարվել, կամ էլ բոլորովին չի կատարվել, ապա կարող է շարժումը (նորից) հաճելի և հանգստացնող ներգործություն ունենալ մարմնի վրա: Սպորտայի հագուստ կամ կոշիկներ կրելը կարող է հաճելի զգացում տալ:

Հոգե-մարմնական կրթություն

Հոգեկան և մարմնական գանգատների, ինչպես նաև դրանց միջև եղած կապի մասին լուսաբանումը համարվում է հոգե-մարմնական կրթության մի մասը: Այս թերապիայի ժամանակ քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպես օրինակ քնելու, լարվածության և հանգստանալու, տրավմայի և էմոցիաների հարցեր: Դրա նպատակը սեփական գանգատների մասին պատկերացումն ավելագնեղն է:

Հոգեբանական թերապիա/Զրույցների թերապիա

Այս թերապիան նշանակելու դեպքում անցկացվում է հոգեբանի կամ հոգեբույժի միջոցով: Սկզբունքորեն այս թերապիան պետք է անհատական անցկացվի: Այս դեպքում գործածվում են զրույցի թերապիաների տարբեր ձևեր:

Միստեմթերապիա

Միստեմթերապիայի դեպքում ուշադրություն է դարձվում ոչ միայն հիվանդի վրա, այլև նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև հիվանդի և նրա ընտանիքի միջև եղած հարաբերության վրա: Հաճախ է պատահում, որ երբ ընտանիքում մեկը հիվանդ է լինում, ապա ընտանիքի մյուս անդամներն էլ են դրանից տառապում: Մենք միասնական ուժերով փնտրում ենք օպտիմալ փոխադարձ աջակցում, որպեսզի յուրաքանչյուրն իր հերթին բավարար էներգիա ունենա եղած պրոբլեմները դիմակայելու համար:

Բուժման ծրագրի առաջնորդում

Բուժման ընթացքում արդեն կարելի է սկսել հիվանդի ապրելավայրի միջակայքում փնտրել զբաղմունքների հնարավորություններ: Հնարավոր է հիվանդի հետ անրադառնալ այն հարցին, թե որքանով է նա գոհ իր տվյալ պահի զբաղմունքներից: Ընդհանուր պատկեր է կազմվում հիվանդի անցյալում կատարած կրթությունների, մասնագիտությունների կամ արհեստների, ինչպես նաև ներկա ուժեղ և թույլ կողմերի մասին, որից հետո փնտրում ենք իրականալի մի նպատակ, որը կարող ենք սահմանել օրվա զբաղմունքների ընթացքում: Այդտեղից կարելի է համագործակցել Էֆենարից դուրս գտնվող բուժման ծրագրերի ուղեկցման հետ, ինչպես օրինակ՝ վերաինտեգրացիայի բյուրոի, Էմպլոյ հաստատության (փախաստականների համար կազմակերպություն է) կամ էլ սոցիալական հասարակական աշխատանքի հետ:

De Evenaar, Centrum voor Transculturele Psychiatrie

Դրենտեի GGZ
Էֆենար
Տարազգային Հոգեբուժության Կենտրոն
Altingerweg 1
Postbus 30000
9411 RA Beilen
Հեռ. (0593) 53 58 42
Ֆաքս. (0593) 53 58 51
E-mail: deevenaar@ggzdrenthe.nl

Էֆենարը տեղադրված է Վեյերդ (Weijerd) շենքում: Այն հիվանդները, որոնք առաջին անգամ են գալիս կարող են ներկայանալ քարտուղարությանը, կողքը գտնվող Էտստուլ (Etstoel) շենքի գլխավոր մուտքից ներս մտնելով:

www.ggzdrenthe.nl

Ի՞նչ է անում Դրենտեի GGZ-ը

Դրենտեի GGZ-ն առաջարկում է ամբուլատոր, պոլիկլինիկային և հիվանդանոցային հոգեկան վիճակի բուժում: Հոգեկան վիճակի բուժումն առաջարկվում է երեք տարածքային բաժանմունքներում. Հյուսիսային -Դրենտե, Հարավարևելյան –Դրենտե և Հարավարևմտյան Դրենտե: Բացի այդ, Դրենտեի GGZ-ն առաջարկում է հիվանդանոցային և ամբուլատոր դատական – բժաշկական հոգեբուժություն:

Ծերերի բուժումն ու խնամքն առաջարկվում է երկու խնամքի և երկու բուժող հաստատությունների կողմից կամ էլ այդ հաստատություններում:

Կանխարգելումը, հասարակական ծառայության ցուցաբերումն ու գիտական հետազոտությունները մտնում են Դրենտեի GGZ-ի հիմնական գործունեությունների մեջ: Դրենտեի GGZ-ն առաջարկում է մի շարք կրթություններ, ինչպես օրինակ՝ հոգեբուժական կրթություն, հոգեբուժական հոգեբան, հիվանդանոցի հոգեբան, բույժբույրական և խնամքի կրթություն:

Դրենտեի GGZ-ում աշխատում են 3000 մարդ, որոնք բաշխված են Դրենտեի տարբեր ֆիլիալներում: Տարեկան 15000 մարդ է դիմում մեր ծառայությունից օգտվելու համար:

© 2006 Դրենտեի GGZ, Ասսեն, Հոլանդիա

ZW.025P (11/06)

Այս հրատարակության բոլոր տեքստերի և պատկերների հեղինակային իրավունքը պատկանում է Դրենտեի GGZ-ին և իրավաբանորեն պաշտպանված են: Դրա ամբողջական կամ մասնակի յուրացումը, ինչ ձևով որ ուզում է լինել, հնարավոր է միմիայն Դրենտեի GGZ-ի նախնական գրավոր թույլտվությամբ: Այդ հարցով կարող եք կապվել հաղորդակցման բաժնի հետ:

Datum: 22-02-2010

Copyright 1998 -2010, GGZ Drenthe, Assen (NL). Deze informatie is afkomstig van www.ggzdrenthe.nl/evenaar